ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
INDUSTRIAL DEVELOPMENT FOUNDATION
ФОНД РАЗВИТИЯ ПРОМЫШЛЕННОСТИ

№ ԱԶՀ-ՎԴ-1
«8» ապրիլի 2014թ.

Ձեր №

ՀՐԱՎԵՐ-ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊՈԱԿ-Ի ՀԵՏ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ
ԿՆՔԱԾ ԱՆՁԱՆՑ

Հարգելի պարոն պարոն/տիկին

ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/7 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Արդյունաբերության զարգացման հիմնադրամի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայությունները:

Ծառայության մատուցումն իրականացվում է սույն գրությանը կից ներկայացված պայմանագրի նախագծով սահմանված կարգով:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեով, N 819 սենյակ, Տիրան Լաճիկյանին, մինչև 2014թ-ի ապրիլի 15-ը, ժամը 10:30-ն:

Հայտերը կբացվեն Արդյունաբերության զարգացման հիմնադրամի գրասենյակում, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեով, N 819 սենյակում, 2014թ-ի ապրիլի 15-ին, ժամը 10:30-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/7 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և Ձեր կողմից ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, իսկ

Մկրտչյան փող. 5, 0010, ք. Երևան, Հեռ.՝ (+374 10) 597 230 ул. М. Мкртчян 5, 0010, г. Ереван, Тел.: (+374 10) 597 230
5 M. Mkrtchyan str., 0010, Yerevan, Tel.: (+374 10) 597 230

պատվիրատուի կողմից անգործության ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ այդ ժամկետի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և պատվիրատուին է ներկայացնում պայմանագիրը և պայմանագրի ապահովումը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր՝ 11 (տասնմեկ էջ):

Հարգանքով՝

ՏՆՕՐԵՆ Հ. ՄԻՐԶՈՅԱՆ

Մկրտչյան փող. 5, 0010, ք. Երևան, Հեռ.՝ (+374 10) 597 230 ул. М. Мкртчян 5, 0010, г. Ереван, Тел.: (+374 10) 597 230
5 M. Mkrtchyan str., 0010, Yerevan, Tel.: (+374 10) 597 230